

ԴԵՍԻՐՃՅԱՆԻ ՄԻ ԵՐԳԻԾԱԿԱՆ ՊԱՄՎԱԾՔԸ

Յու. Հովհաննիսյան

Դերենիկ Դեմիրճյանի գրական հարուստ ժառանգության մեջ ըիշ չեն նաև երգիծական պատմածքներն ու ֆելիետոնները, որոնք գրվել են հատկապես 20-30-ական թվականներին Միա թե իշ է առում այդ մասին մեջ գրողը իր ինքնակենսագրության մեջ. «Չսանական թվերին և երեսնական առաջին կեսին ես, ի միջի այլոց, զբաղվում էի ժուռնալիստիկայով, ֆելիետոններով. այցելու էի գործարանները, կոյխոզները, գրում ակնակները: Գրում էի նաև յումորիստական պատմվածքները. գրեցի «Համառոտ անմահներ և հավերժական մահկանացուներ» երգիծական վիպակի սկիզբը: Սկսեցի մի այլ վիպակ՝ «Քազակություն», որ սկսեց տպակել «Կարմիր մոծակ» երգիծարանական ժուռնալում և նրա հետ միասին և դադարեց: Մի քանի երգիծական պատմվածքներ գրեցի նաև «Վերելք» ամսագրում»:

Այդ երգիծական պատմվածքներից և ֆելիետոններից 141-ը /19-ը տպագրվում են առաջին անգամ/ մամուլում տպագրվելուց հետո տեղ են գտնել Դերենիկ Դեմիրճյանի Երկերի ժողովածու /Խամշորություն/ 5-րդ հատորում /Երևան, 1982/: «Հատորի կազմողների //Շավիդ Գրիգորյան, Միլվա Մեսրոպյան ու շաղրափյունից վրիպել թ Դեմիրճյանի երգիծական պատմվածքներից մեկը՝ «Ավազակը», որն առաջին անգամ «Գրական երես» ընթամուր խորագրի տակ տպագրվել է 1931թ. «Կարմիր գինվոր» թերթի դեկտեմբերի 20-ի թիվ 135-ում: Ավելի քան 70 տարի առաջ տպագրված այս պատմվածքը Դեմիրճյանի հաջողված գործերից է և այսօր էլ չի կորցրել իր հնչեղությունը: Այն միանգամայն բյուրիմացարար է դուրս մնացել գրողի Երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության 14 հատորյակի 5-րդ հատորից:

Ընթերցողի ուշադրությանն ենք մերկայացնում այդ պատմվածքը:

Դ. ԴԵՍԻՐՃՅԱՆ

ԱՎԱԶԱԿԸ

Երևակայո՞ւմ եք, ընթերցո՞՞ղ:

Մի խկանան ավազակ, մի ավազակ խվական, մի խոսրով լսու ամենայնի ավազակ սարից գալիս է ներս ընկնում մի Սրբոյի տուն, հրացանը դեմ անում Արքոյին, ոտք խփում գետնին, հետո հրացանը ձեռքին գնում բազում է բախնտի վրա ...

Ու մնում:

Հետո՞ : Հետո սպասում է Սրբոն, թե ինչ է անելու ավազակը:

Մեկ օր, երկու օր, երեք օր:

Ավազակը ծանր ընկել մնացել է: Միտք է անում Սրբոն:

- Լավ, ի՞նչ է այս ավազակի ծրագիրը:

Ու դիմում է Սրբոն ավազակին.

- Լսիր, բարեկամ, ինչ եմ ասում ... - Գնալո՞ւ ես թե ոչ:

- Այ, ես էլ հենց դրա վրա եմ մտածում:

- Ինչ կա մտածելու: Գնացողը ... կգնա ...

- Ես էլ հենց այդ եմ ասում: Ինչ որ է՝ կխորհրդակցենք այդ մասին: Յամածայնության կգանք:

- Ի՞նչ պիտի խորհրդակցենք կամ համածայնության գանք: Ահա ես համածայն եմ - ուղակի վեր կաց գնա - պրծավ գնա՞ց ...

- Գնալը կգնա՞մ:

Դե որ կգնաս՝ գնա էլի՞ :

- Այ, երբ որ գնալիս կգա՝ կգնամ:

- Ե՞րբ պիտի գնալը գա:

- Երբ որ գնալու եղա:

- Այսինքն ուզում ես գնալ ու չես կարողանում գնա՞լ թե ի՞նչ, չեմ հասկանում:

Սրբոն մնացել է զարմացած:

- Չեմ հասկանում: Կարգին մի բան ասա: Ախր սրա վերջին ի՞նչ է լինելու:
- Մի բան կանենք:
- Ես հարևաններին կլանչեմ:
- Ավելի լավ, կանչիր, բանակցենք:
- Ե, լավ, քեզնից չի՞ կախված գնալդ:
- Ոչ:
- Ուզո՞ւմ ես օգնեմ քեզ, որ գնաս:
- Չե, ես ինքս կգնամ: /Մի թիշ հետ քաշվիր/:
- Ախր ինչո՞ւ, է ... Սիա, քաշվեցի, դե՛ գնա:
- Ծը, ուրիշի գործերի մեջ մի՛ խառնվի: Ի՞նչ բան ունես մեջը ...
- «Ուրիշի գործերի» - Սրբոն արաքվում է հերսից: Թե ինքը ինքն է՝ ինչո՞ւ է իր գործը ուրիշինը, իսկ թե իրգործը իրենն է՝ ուրիշը՝ ո՞վ է ...
- Լսիր, ինձ մի հասկացրու: Խսկի առհասարակ է՝ լուսադիր չես գնալու:
- Սոհասարակ տեսնենք ... Ուսդ քաշի՝ էն կողմ:
- Ախր ինչո՞ւ է՛: Սխմել ես դրանը ... Դո՞ւրս գնամ, ի՞նչ է:
- Քաշվի՛, ասում եմ քեզ, անհանգիստ մի՛ անի ինձ: - Ե՛ս եմ անհանգիստ անում քե՞զ, թե՞ դու ինձ:
- Տո՛ եսպես բա՞ն եք տեսել: Տունը իմը, եկել ես ինձ անհանգիստացնում ու ինձ ես ասում անհանգիստ /Ծրա՛խկ, մի հատ Սրբոյի երեսին/:
- Քեզ հետ չե՞ն, որ ասում են հանգիստ կաց:
- Եհ, ի՞նչ պիտի անի Սրբոն: Ուժը չի պատում թե ինքը խփի:
- Հար, դե լավ: Խփելը խփեցիր, ծեռիցդ եկածն արիք: Է՞լ բան ունես ասելու հիմի՞:
- Ասիր ու պրծավ՞ր: Ինչո՞ւ չես դուրս գալիս այս տանից:
- Յա՛ ...
- Բա ի՞նչ. ուզում ես ներսը մնաս, որ քնած ժամանակս բան-ման քողնե՞ս, ավազակ շան որդի:
- Յա՛, յա՛ ... յայլա. ես պառկում եմ քնելու: Ուա՛դ եղի:
- Սի հատ էլ շրիկացրեց ու համկարծ գոտաց.
- Շա՞ն որդի, տես ի՞նչպես էլ ձեռու ցավեց: Արի ու սրանց պեսին մի սպանի:
- Տվեց հրացանի կորը Սրբոյի հետույթին ու դուրս ցցեց:
- Ու կանգնած է Սրբոն իր տան դրան: Ավազակն էլ հրացանը պատուհանից բռնել է դուրս, որ Սրբոն շիարձակվի ... ավազակի վրա:
- Այսինքն տունը պաշտպանում է ավազակներից ...
- Աշխարհի քոռությանը մտիկ:
- Այսպես է անում ճապոնական իմպերիալիզմը Մանջուրիայում:
- Եվ բոլոր արմատական լիբերալ չափավոր ավազակները գաղութային երկրկներում: